

ԿՐԻՄԻՆԱԼՈՉԻԱ

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՎԱԽԸ ԵՎ ՎԻԿՏԻՄԻԶԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Յուրաքանչյուր պետությունում բնակչության վիկտիմիզացիան¹ գնահատելու հարցումներից ստացված արդյունքները այլընտրանքային արժեքավոր աղբյուր են հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալների հետ համադրելու առումով: Վիկտիմիզացիայի գնահատման նպատակով պարբերական հարցումները վաղուց ի վեր արդյունավետ կիրառություն են ստացել թե՛ ԱՄՆ-ում, թե՛ եվրոպական բազմաթիվ երկրներում²: ՀՀ-ում վիկտիմոլոգիական հարցումներ իրականացվել են առանձին գիտական ուսումնասիրությունների շրջանակներում, սակայն բնակչության շրջանում վիկտիմիզացիայի գնահատման նպատակով լայնամասշտաբ հարցման փորձ մինչև 2010 թ. չի արձանագրվել:

2010 թ.-ին ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ ՀՀ բոլոր մարզերի և Երևան քաղաքի բոլոր համայնքների 14-ից բարձր տարիքային խմբերի 5337 ներկայացուցիչների շրջանում իրականացվեց անանուն վիկտիմոլոգիական հարցում, որի նպատակն էր պարզել, թե հասարակության անդամները որքանով են իրենց անվտանգ զգում, և ինչ ծավալների է հասել վիկտիմիզացիան ՀՀ-ում, ինչպես նաև բացահայտել այն գործոնները, որոնք հանգեցնում են բնակչության վիկտիմիզացիային:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ վիկտիմիզացիայի ճիշտ գնահատման կարևորագույն նախադրյալներից մեկը հասարակության անդամների կողմից սեփական անվտանգության ընկալման գնահատումն է՝ հարցման շրջանակներում հասարակության անդամներին առաջարկվեց պատասխանել այն հարցին, թե որքան ապահով են իրենց զգում ցերեկը փողոցում միայնակ գտնվելիս, մութն ընկնելուց հետո փողոց միայնակ դուրս գալիս, ինչպես նաև տանը միայնակ լինելիս:

Առաջադրված հարցերի պատասխանների վերլուծությունից պարզ դարձավ, որ ՀՀ բնակչության 81.3%-ը իրեն միանգամայն ապահով է զգում տանը միայնակ լինելիս, 73.9%-ը էական խնդիրներ չի տեսնում ցերեկը փո-

¹ Վիկտիմիզացիան հանցավոր ոսնձգություններից հասարակության անդամների տուժելու գործընթացն է:


² Տե՛ս **Zsolt Nyiri**. Crime and Security in European Capitals based on the data of the European International Crime Survey (EU ICS), Gallup Europe, **Tom Michels**. Crime and Victimization in Luxembourg: results of the European Crime and Safety Survey based on the data of the European International Crime Survey (EU ICS), Gallup Europe, **Julie Sauvé and Kwing Hung**. An international perspective on criminal victimisation: Results of the International Crime Victimization Survey 2004-2005, **Farrell, G., Tseloni, A. & Pease, K.** (2005). Repeat victimization in the ICVS and NCVS. Crime Prevention and Community Safety, etc.:

դոցում միայնակ լինելիս, մինչդեռ հարցվածների միայն 45.6% -ն է իրեն ապահով զգում մութ ընկնելուց հետո փողոցում միայնակ գտնվելիս:

Ուշագրավ է, սակայն, որ օրվա տարբեր ժամերին սեփական անվտանգության ընկալման նման տարբերակման պարագայում գրեթե նույնն է հանցանքի զոհ դառնալու հավանականության գնահատումը: Մասնավորապես, այն հարցին, թե ինչն է Ձեր անապահովության զգացողության պատճառը, երեք խմբերում էլ անապահովության զգացում ունեցող հարցվածների շուրջ 23%-ը պատասխանել է հանցանքի զոհ դառնալու հավանականությունը: Ստացված արդյունքները ներկայացնենք գրաֆիկով:


Գրաֆիկ 1

Եթե ցերեկը փողոցում միայնակ լինելիս Ձեզ ապահով չեք զգում, ապա ի՞նչն է Ձեզ անհանգստացնում:




Գրաֆիկ 2

Եթե մութ ընկնելուց հետո փողոցում միայնակ գտնվելիս Ձեզ ապահով չեք զգում, ապա ի՞նչն է Ձեզ անհանգստացնում:



Եթե տանը միայնակ լինելիս Ձեզ ապահով չեք զգում, ապա ի՞նչն է Ձեզ անհանգստացնում:



Իրենց անապահովության զգացողության գործոնների ցանկում հարցման ենթարկվածների բավականին մեծ խումբ նշել է ՁԼՄ-ներով հանցանքների մասին շատ խոսելը³: Կրիմինոլոգիական գրականության մեջ վաղուց քննարկվում է այն հարցը, որ ՁԼՄ-ներով հանցագործությունների մասին տեղեկատվության տարածումը նպաստում է բնակչության շրջանում հանցավորությունից վախի մակարդակի աճին: Այնուհանդերձ, այսօր դեռևս հնարավոր չէ հստակ պատասխանել այն հարցին, թե արդյոք հանցավորության հանդեպ վախի մակարդակն աճում է, քանի որ ՁԼՄ-ներն անընդհատ հաղորդում են հանցագործությունների մասին, թե ընդհակառակը՝ հասարակության անդամների շրջանում հանցավորության հանդեպ վախի բարձր մակարդակի պարագայում են ՁԼՄ-ները ավելի հաճախ անդրադառնում հասարակությանը առավել հուզող, հասարակության անդամների կողմից առավել «պահանջարկ» վայելող թեմային:

ՁԼՄ-ների կողմից հանցագործությունների մասին տեղեկատվության տարածման գործոնի ազդեցության մասին հարցման ենթարկվածների կողմից առավելապես նշվել է ցերեկային ժամերին փողոց միայնակ դուրս գալիս, ինչպես նաև տանը միայնակ գտնվելիս իրենց անհանգստության պատճառը բացատրելիս, մինչդեռ մութն ընկնելուց հետո փողոց միայնակ դուրս գալիս իրենց անհանգստության ձևավորման գործոնների բացահայտման ժամանակ հարցման ենթարկվածները որպես կանոն նշել են օբյեկտիվ երևույթներ՝ փողոցների ամայությունը, չլուսավորված, հետևա-


³ Տե՛ս **Linda Heath, Kevin Gilbert**. Mass Media and Fear of Crime. American Behavioral Scientist. February 1996 vol. 39 no. 4, **Stapel, D. A, Reicher, S. D. & Spears, R.** (1994). Social identity, availability and the perception of risk. Social Cognition, 12(1), էջ 1-17, **Farrall, S., Jackson, J. & Gray, E.** (2007). Theorising the fear of crime: The cultural and social significance of feelings of insecurity. Published on the Social Science Research Network, Ferraro, K. (1995). Fear of Crime, Interpreting Victimization Risk. State University of New York press, Albany; **Maguire, M. Morgan, R. and Reiner, R.** (1997). Oxford Handbook of Criminology. Oxford:

բար՝ իրենց մեջ անվերահսկելի, անակնկալ իրադրությունների հնարավորություն պարունակող վայրերի առկայությունը:

Փորձելով հասկանալ, թե մեր հասարակության մեջ օբյեկտիվորեն որքան բարձր է շեղվող կամ հանցավոր վարքագծի գոհ դառնալու հավանականությունը, բնակչությանն առաջարկվեց պատասխանել այն հարցին, թե իրենց բնակության վայրի անմիջական հարևանությամբ անհանգստության առիթ տվող ի՞նչ գործոններ են առկա: Հարցվածների պատասխանների բաշխումը ներկայացված է գրաֆիկական պատկեր 4-ում:

Գրաֆիկ 4

Ձեր բնակության վայրի անմիջական հարևանությամբ ստորև թվարկվածներից ո՞րն է առկա:



Բնակության վայրի անմիջական հարևանությամբ անհանգստության առիթ տվող գործոնների շարքում հարցվածների կողմից առավել հաճախ նշվել է առանց զբաղմունքի շրջող անչափահասների առկայությունը, մինչդեռ հանցավոր խմբերի առկայությունը և հանցագործությունների համար դատապարտված անձանց առկայությունը միասին վերցրած մատնանշվել են հարցվածների միայն 4%-ի կողմից:

Թեև Հայաստանում անչափահասների հանցավորության ցուցանիշները ավանդաբար բարձր չեն եղել, այնուհանդերձ վերջին տասնամյակում ՀՀ-ում նկատվում է անչափահասների հանցավորության աճի միտում: Նույնիսկ անչափահասների հանցավորության լատենտայնության բարձր աստիճանի պայմաններում աճում է անչափահասների հանցավորության տոկոսային հարաբերակցությունը հանցավորության ընդհանուր կառուցվածքում⁴: Բնական է, որ նման պայմաններում փողոցում առանց զբաղմունքի


⁴ Տե՛ս Գաբուջյան Ա. Ա. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ер., 2007, էջ 163-164:

շրջող անչափահասների առկայությունը դիտվում է որպես ռիսկային գործոն, հատկապես որ շեղվող վարքագծի դրսևորման հարցում դրա դերը բազմիցս հավաստվել է տարբեր հետազոտողների կողմից⁵:

Վիկտորիա Գաբուզյանի և հանցավորության զոհ դառնալու հավանականության գնահատման նպատակով 33-ում անցկացված հարցման ընթացքում հարցվողներին առաջին հերթին առաջարկվեց հստակեցնել, թե որքանով է իրենց մտահոգում գողության զոհ դառնալու հավանականությունը: Ստացված պատասխանների վերլուծությամբ պարզ դարձավ, որ բնակչության միայն 28.2 %-ն է, որ բնավ մտահոգված չէ գողության զոհ դառնալու վտանգով: Ընդ որում, գողության զոհ դառնալու մտահոգության տեղիք տվող գործոնները առավելապես օբյեկտիվ բնույթ ունեն. հարցվածների 24.2%-ը հայտնել է, որ իրենք, իրենց հարևանները կամ հարազատները արդեն մեկ անգամ դարձել են գողության զոհ:

Գրաֆիկ 5

Ձեզ մտահոգում է, որ Ձեր տանից կարող է գողություն կատարվել:



Բնակարանային գողության զոհ դառնալու մտահոգության տեղիք տվող գործոնների շարքում բնակչության 15.2%-ի կողմից նշվում է այն, որ ներկայումս ոչ ոք, բացի տանտիրոջից, գործնականում չի հետևում տների անվտանգությանը: Այդ առումով մտահոգիչ է նաև այն, որ նույնիսկ


⁵ Տե՛ս Rosemary Barberet, Benjamin Bowling, Josine Junger-Tas, Cristina Rechea-Alberola, John van Kesteren, Andrew Zurawan. Self-Reported Juvenile Delinquency in England and Wales, The Netherlands and Spain. Development and Statistics Directorate Helsinki 2004, Junger-Tas, Josine, Marshall, Ineke Haen, & Ribeaud, Denis. Delinquency in an International Perspective: The International Self-Reported Delinquency Study (ISR). Monsey, NY: Criminal Justice Press, The Hague, The Netherlands: Kugler Publications, 2003, Gabuzyan A., Margaryan A., Martin Killias, Josine Junger-Tas, Majone Stekete, Dirk Enzman. Juvenile Delinquency in Europe and Beyond: Results of the Second International Self-Reported Study. Springer 2009, ISBN – 978-0-387-95982-5, էջ 369-389:

այն անձինք, ովքեր անհանգստություն չեն հայտնել բնակարանային գործողության զոհի վերածվելու առումով, շատ քիչ դեպքերում են իրենց նման դիրքորոշումը բացատրել իրավապահ մարմինների հանդեպ վստահությանը կամ վերջիններիս կողմից հանցավոր վարքագծի կանխարգելման աշխատանքների իրականացմամբ: Այս պատկերը վկայում է իրավապահ մարմինների և բնակչության միջև փոխհամագործակցության և փոխվստահության մթնոլորտի ստեղծմանն ուղղված միջոցառումների իրականացման անհրաժեշտության մասին, ինչին ուղղված քայլերից մեկը կարող է լինել իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից բնակչության շրջանում վիկտիմոլոգիական գիտելիքների տարածումը, վերջիններիս ինչպես իրենց, այնպես էլ իրենց բնակարանների անվտանգության ապահովման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը (օրինակ՝ գործնականում առավել հուսալիություն ցուցաբերած անվտանգության միջոցների տեսակների, բնակարանների անվտանգության ապահովման տարրական պահանջների վերաբերյալ բնակչությանն իրազեկելը և այլն):

Թեև հարցվածների միայն 14.7%-ն է նշել, որ ինքը, իր հարազատները կամ հարևանները փողոցում դարձել են հարձակման զոհ, այնուհանդերձ հարցվածների 95.5%-ը նշել է, որ իրեն հուզում է փողոցում հարձակման զոհ դառնալու վտանգը:

Գրաֆիկ 6

Ձեզ մտահոգում է փողոցում հարձակման զոհ դառնալու հավանականությունը:




Փողոցում հարձակման զոհ դառնալու անհանգստության պատճառ հանդիսացող գործոնների թվում բնակչության կողմից առավելապես նշվում է անպաշտպանվածության զգացումը. թեև հարցվածների միայն 19.8%-ն է

ուղղակիորեն ընտրել պատասխանի այդ տարբերակը, սակայն հարցման շրջանակներում ընդգրկված անձանց 19.8%-ը նույնպես նշել է վտանգի դեպքում հասարակության, իսկ 18.5%-ը՝ իրավապահ մարմինների անտարբերությունը՝ դրանով իսկ անուղղակիորեն կրկին մատնանշելով իրենց անպաշտպան լինելու, նման զգացողություն ունենալու հանգամանքը:

Հարցման ենթարկված անձանց պատասխանների վերլուծությունը վկայում է, որ բնակչության կողմից բարձր է գնահատվում հանցավոր ոտնձգության ենթարկվելու հավանականությունը: Թերևս նման վիճակով է բացատրվում նաև այն փաստը, որ հարցվածների 72.7%-ը կարծում է, որ վերջին 3 տարվա ընթացքում ՀՀ-ում հանցագործություններն աճել են: Ընդ որում, բնակչության կարծիքով, առավելագույն աճ գրանցվել է գողությունների և խուլիգանությունների դինամիկայում:

Գրաֆիկ 7

Ձեր կարծիքով ՀՀ-ում վերջին 3 տարվա ընթացքում ո՞ր հանցագործություններն են առավել հաճախ կատարվում:




Հասկանալու համար, թե որքանով է բնակչության շրջանում առկա անհանգստությունը օբյեկտիվ, հարցվողներին առաջարկվեց պատասխանել այն հարցին, թե վերջին 3 տարվա ընթացքում նա կամ իր ընտանիքի անդամը դարձել է արդյոք հանցագործության զոհ, կամ արդյոք ինքն ականատես է եղել հանցավոր ոտնձգության: Հարցվածների 13.1%-ը նշեց, որ ինքը կամ իր ընտանիքի անդամը դարձել է հանցագործության զոհ, իսկ հանցանքի ականատես լինելու մասին նշեց հարցվածների 22.9%-ը:

Ընդ որում, հարցվածները կամ նրանց հարազատները առավելապես տուժել էին գողությունից: Ուշագրավ է, որ պատասխանելով այն հարցին, թե Ձեր կարծիքով վերջին 3 տարվա ընթացքում որ հանցագործություն-

ներն են առավել հաճախ կատարվում, հարցվածների միայն 11.2%-ն էր նշել կաշառակերության և 3.5%-ը՝ ծեծի մասին, մինչդեռ վերջին 3 տարվա ընթացքում հանցագործությունից փաստացի տուժելու մասին հայտնելիս կաշառակերության մասին նշել էր հարցվածների արդեն 16.1%-ը, իսկ ծեծի մասին՝ 9.5%-ը: Թերևս կարելի է ենթադրել, որ վերջին տարիների ընթացքում կողոպուտների, ավազակությունների և գողությունների կտրուկ աճի, դրանց վերաբերյալ ՁԼՄ-ներով տեղեկատվության ինտենսիվ տարածման պատճառով հասարակության անդամների կողմից սուբյեկտիվորեն ավելի բարձր է գնահատվում վերջիններիս կատարման հնարավորությունը, թեկուզև օբյեկտիվորեն դրանցից փաստացի տուժելու ցուցանիշները զիջում են կաշառակերության, ծեծի ու առողջությանը վնաս պատճառելու զոհ դառնալու իրական պատկերին:

Գրաֆիկ 8


Եթե վերջին 3 տարվա ընթացքում Դուք կամ Ձեր հարազատը դարձել եք հանցագործության զոհ, ապա ի՞նչ հանցանքի:



Ինչ վերաբերում է հանցավոր ոտնձգությանը ականատես լինելուն, ապա բնական է, որ նման կարգավիճակում հայտնված հարցվածների մեծ մասը պետք է մատնանշեր ոչ թե գողությունը (ինչը ենթադրում է գույքի գաղտնի հափշտակություն), այլ բռնությամբ զուգորդված արարքների կատարումը. հանցագործության ականատես լինելու մասին վկայած անձանց 54%-ը նշել է, որ ականատես է եղել ծեծի, խուլիգանության կամ անձի առողջությանը վնաս պատճառելուն: Հափշտակության ականատես են եղել հարցվածների 30.8%-ը:

Գրաֆիկ 9

Պուր վերջին 3 տարվա ընթացքում ի՞նչ հանցագործության եք ականատես/վկա եղել:




Հարցման շրջանակներում ընդգրկված և հանցագործությունից տուժած անձանց 76.3%-ի պնդմամբ իրենք վերջին 3 տարվա ընթացքում մեկ անգամ դարձել են հանցավոր ոտնձգության զոհ, մինչդեռ 13.9%-ը նշել էր հանցագործությունից երկու, իսկ 9.8%-ը՝ երեք և ավելի անգամ տուժելու մասին: Փաստորեն, հարցվածների 23.7%-ը ենթարկվել է ռեվիկտիմիզացիայի:

Նկատի ունենալով այն, որ հարցվածների մեծամասնությունը հաղորդել է, որ ինքը կամ իր ընտանիքի անդամը հիմնականում տուժել է գողություններից, բնական է, որ այն հարցին, թե «որտե՞ղ է կատարվել ոտնձգությունը», առավելապես պետք է հետևեր «իմ/ հարազատիս տանը» պատասխանը:

Գրաֆիկ 10

Որտե՞ղ է տեղի ունեցել հանցավոր ոտնձգությունը:



Գրաֆիկ 10-ում արտացոլված պատկերը էապես տարբերվում է հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության վերլուծությանը ստացված պատկերից: Վերջինիս համաձայն, ՀՀ-ում գրանցված հանցագործությունների կատարման վայրի առումով առաջատարը ոչ թե տուժողի կամ հանցավորի բնակարանն է, այլ փողոցը, հասարակական վայրերը⁶: Պաշտոնական վիճակագրության և կատարված վիկտիմոլոգիական հարցման արդյունքների նման շեղման պատճառը, թերևս, պայմանավորված է գողությունների գրանցման ժամանակ տեղ գտած թերություններով, հանցագործության այս տեսակի վերաբերյալ տուժողների կողմից իրավապահ մարմիններին չհաղորդելու բարձր մակարդակով: 2010 թ. կատարված հարցման արդյունքները վկայում են, որ վերջին երեք տարվա ընթացքում հարցվածների 43.9%-ը դարձել է գողությունների զոհ, մինչդեռ պաշտոնական վիճակագրության մեջ գողության վերաբերյալ հաղորդումների քանակը էապես զիջում է այս ցուցանիշին: Ավելին, արդեն իսկ նշված հարցման արդյունքների համաձայն՝ հանցավոր ոտնձգության զոհ դարձած անձանց միայն 43.8% -ն է նշել, որ դիմել է իրավապահ մարմիններին, այսինքն՝ ակնհայտ է հանցավոր ոտնձգությունների լատենտայնությունը:

Կատարված վիկտիմոլոգիական հարցման արդյունքների վերլուծությանը պարզ դարձավ, որ հանցավոր ոտնձգությունները առավելապես կատարվել են աշխատանքային օրերին՝ ժամը 12-18-ն ընկած ժամանակահատվածում:

Ոտնձգությունների 87.6%-ի դեպքում ոտնձգողը եղել է արական սեռի ներկայացուցիչ: Ըստ տարիքային խմբերի՝ ոտնձգողների զանգվածում գերակշռել են 18-40 տարիքային խմբերի ներկայացուցիչները: Փաստորեն, ստացված տվյալները լիովին համահունչ են կրիմինոլոգիական գրականության⁷ մեջ բազմիցս ամրագրված, ինչպես նաև ՀՀ-ում հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության պատկերին, որի վերլուծությունը ևս վկայում է 18-40 տարիքային խմբի արական սեռի ներկայացուցիչների բարձր հանցավոր ակտիվության մասին:

Հարցման ենթարկված և հանցավոր ոտնձգության զոհ դարձած անձանց պնդմամբ, ոտնձգությունների 47.9%-ի դեպքում հանցավորը գործել է միայնակ, մինչդեռ 27.7% դեպքերում՝ մեկ, իսկ 24.4% դեպքերում՝ երկու և ավելի հանցակիցների հետ:


Հարցման ենթարկված և վերջին 3 տարվա ընթացքում վիկտիմիզացիայի ենթարկված անձանց 42.6%-ը նշել է, որ հանցավոր ոտնձգության ժամանակ իր կամ իր ընտանիքի անդամի հանդեպ կիրառվել է ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն: Միաժամանակ, հարցման ենթարկված և վերջին 3 տարվա ընթացքում հանցագործության ակնատես եղած անձանց արդեն 50.9%-ն է հաղորդել հանցավոր ոտնձգության ժամանակ ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն կիրառելու մասին:

⁶ ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոնի կողմից տրամադրված նյութեր, 2004-2010 թթ.:

⁷ Տե՛ս **Хачикян А.М.** Лишение свободы: проблемы исполнения наказания в отношении впервые осужденных. Ер., 2000, էջ 23, **Shadd Maruna.** Desistance and Development. Papers from the British Criminology Conference, Queens University, 1997:


Գրաֆիկ 11

Վերջին 3 տարվա ընթացքում հանցավոր ոտնձգության ժամանակ բռնության ենթարկված անձի կողմից այդ փաստի մասին տեղեկացումը:



Գրաֆիկ 12

Վերջին 3 տարվա ընթացքում հանցավոր ոտնձգության ժամանակ բռնության կիրառմանը ականատես անձի կողմից այդ փաստի մասին տեղեկացումը:




Նկատի ունենալով այն, որ հարցման ենթարկված և վերջին երեք տարվա ընթացքում հանցավոր ոտնձգության ականատես եղած անձինք առավելապես նշել են ծեծի, խուլիգանության, մարմնական վնասի պատճառման ականատես լինելու մասին, լիովին հասկանալի է ֆիզիկական բռնություն գործադրելու մասին նրանց կողմից հաղորդման ավելի բարձր ցուցանիշների առկայությունը:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում մինչև հանցագործության կատարումը տուժողի վարքագծային առանձնահատկությունները արտացոլող տվյալները, որոնք հաճախ հնարավորություն են տալիս պատասխան տալ այն հարցին, թե ինչու կոնկրետ դեպքում կոնկրետ անձը հայտնվեց տուժողի կարգավիճակում: Այս տվյալների վերլուծությունը չափազանց կարևոր է հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելման, վիկտիմոլոգիական գիտելիքների մշակման առումով:


Մասնավորապես, հարցման շրջանակում ընդգրկված և վերջին երեք տարվա ընթացքում վիկտիմիզացիայի ենթարկված անձանց 85.9%-ի կարծիքով իրենք հայտնվել են հանցագործության զոհի կարգավիճակում, քանի որ բավարար շրջահայացություն չեն ցուցաբերել, դրսևորել են անզույժ վարքագիծ, եղել են դյուրահավատ: Ավելին, հարցվածների շրջանում հանցագործության զոհ դարձած անձանց 93.9% -ի կարծիքով, հանցագործությունից կարելի էր խուսափել ավելի զգույշ լինելու, անժանոթներին չվստահելու պարագայում:

Գրաֆիկ 13

**Ձեր կարծիքով, ինչո՞ւ եք դուք դարձել հանցագործության զոհ:
(Վիկտիմիզացիայի ենթարկված անձանց պատասխաններ:)**



(Հանցավոր ոտնձգության ականատես դարձած անձանց պատասխաններ:)



Գրաֆիկ 13-ից ակնհայտ է, որ վերջին երեք տարվա ընթացքում վիկտիմիզացիայի ենթարկված անձանց միայն 3.3%-ն է նշել, որ հանցավոր ոտնձգության կատարումը դետերմինացված է եղել իր սադրիչ վարքա-


գծով, մինչդեռ վերջին երեք տարվա ընթացքում հանցագործության ակա-
նատես եղած անձանց 24.1%-ը նշել է, որ հանցավոր ոտնձգության զոհի
կարգավիճակում հայտնվելու գործում վճռորոշ դեր է ունեցել տուժողի
սաղորիչ վարքագիծը:

Պատասխանների նման տարբերությունը որոշակիորեն բացատրվում է
նրանով, որ հանցավոր ոտնձգության ականատեսները հիմնականում նկա-
տի են ունեցել ծեծի, մարմնական վնաս պատճառելու, խուլիգանության զո-
հերին, մինչդեռ անմիջականորեն վիկտիմիզացիայի ենթարկված անձանց
մեծամասնությունը փորձել է հասկանալ, թե ինչու է ինքը հայտնվել գողու-
թյան կամ խարդախության զոհի կարգավիճակում: Այնուհանդերձ, չպետք է
բացառել նաև հոգեբանական պաշտպանության այն մեխանիզմը, որով ա-
ռաջնորդվում է մարդ արարածը՝ մշտապես փորձելով սխալները, բացթո-
ղումները, բացասական քայլերը փնտրել ուրիշի, այլ ոչ թե սեփական վար-
քագծում:


Ըստ հարցման արդյունքների՝ ոտնձգությունների 47.1%-ի դեպքում
տուժողը հանցավորին նախկինում չի ճանաչել, և թերևս այդ է պատճառը,
որ այն հարցին, թե «ինչպիսի՞ հարաբերությունների մեջ էիք հանցավորի
հետ», ոտնձգության զոհ դարձած հարցվածների 54.6% -ը նշել է, որ իր և
հանցավորի միջև որևէ հարաբերություն չի եղել:

Գրաֆիկ 14

Ո՞վ էր Ձեր հանդեպ հանցավոր ոտնձգություն կատարած անձը:




Ինչպիսի՞ հարաբերությունների մեջ էիք հանցավորի հետ:



Իհարկե, ստացված տվյալների վերլուծության ժամանակ պետք է նկատի ունենալ, որ հանցավոր ոտնձգության զոհերը առաջադրված հարցին պատասխանել են իրենց անձնական փորձից ելնելով, ինչից էլ կարելի է եզրակացնել, որ այս հարցին պատասխանողների մեծամասնությունը նկատի է ունեցել իր և իր հանդեպ հափշտակություն կատարած անձի միջև եղած կապի բնույթը, ծանոթության աստիճանը:

Վիկտիմոլոգիական տեսակետից չափազանց կարևորվում է նաև հանցավոր ոտնձգության ընթացքում տուժողի դրսևորած վարքագիծը: Կատարված հարցման արդյունքները վկայում են, որ հանցավոր ոտնձգության ենթարկված անձանց 44.3%-ը ոտնձգության ընթացքում չի փորձել ազդել հանցավորի վրա՝ դրսևորելով պասիվ վարքագիծ:


Չանցագործության ընթացքում փորձե՞լ եք ազդել հանցավորի վրա:



Մինչդեռ վիկտիմոլոգիական բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ ոտնձգությունների ընթացքում տուժողի ակտիվությունը՝ խոսքով, վարքագծով և այլն, կարևորագույն նախադրյալ է հանցավորի կողմից այն հանգամանքի գիտակցման, որ իր դիմաց ոչ թե առարկա է, այլ իր նման մարդ, ինչն էլ հաճախ հանգեցնում է ոտնձգության դադարեցման⁸: Նման օրինաչափություն գրանցվել է նաև կատարված ուսումնասիրության արդյունքում: Մասնավորապես, տուժողի ակտիվությունը, որը հիմնականում դրսևորվել է հանցավորի վրա հոգեբանորեն ազդելով, 37,8% դեպքերում հանգեցրել է ոտնձգության խափանման: Սա, իհարկե, չի նշանակում, որ ցանկացած ոտնձգության դեպքում տուժողը պետք է դիմադրի, քանի որ կախված ոտնձգության բնույթից, ոտնձգողի անձից՝ նման դիմադրությունը կարող է հանգեցնել նրա նկատմամբ ավելի ծանր վնաս պատճառելուն, քան հանցավորը ի սկզբանե ծրագրել էր: Ներկայացված հետազոտության արդյունքները ևս վկայում են, որ դիմադրության պարագայում 23,2% դեպքերում հանցավորն ավելի է զայրացել: Ընդ որում, նման արձագանքներ հիմնականում ստացվել են ավազակության և անձի առողջությանը վնաս պատճառելու զոհ դարձած տուժողներից:

Գրաֆիկ 17

Ինչպիսի՞ն էր հանցավորի արձագանքը Ձեր նման վարքագծի նկատմամբ:




⁸ Տե՛ս Jan. J. M. van Dijk. Introducing victimology. 1997, էջ 75, Антонян Ю. М. Роль конкретной жизненной ситуации в совершении преступления. М., 1973, էջ 66-69; Ежи Баффия. Проблемы криминологии: Диалектика криминогенной ситуации. М., 1983, էջ 107-111:

Հասարակության անդամների վիկտիմիզացիայի, նրանց կողմից սեփական անվտանգության ընկալման մակարդակի ձևավորման հարցում մեծ դեր ունի նաև հասարակության և իրավապահ մարմինների վերաբերմունքը հանցավոր ոտնձգությունների կանխարգելման և խափանման առումով: Գաղտնիք չէ, որ որքան բարձր է հասարակության անտարբերության մակարդակը, այնքան ցածր է նրա անդամների՝ սեփական անվտանգության գնահատման աստիճանը: 2010 թ. կատարված հարցման արդյունքները, ցավոք, վկայում են մեր հասարակությունում անտարբերության մթնոլորտ ձևավորելու միտումի մասին: Մասնավորապես, պատասխանելով այն հարցին, թե «հանցավոր ոտնձգության ենթարկվելու ժամանակ Ձեր օգնության կանչերին հասարակության անդամները արձագանքեցի՞ն», հարցվածների 50%-ը տվել է բացասական պատասխան:

Գրաֆիկ 18

Ձեր օգնության կանչերին հասարակության անդամները արձագանքեցի՞ն:




Հարցման արդյունքները վկայում են, որ իրավապահ մարմինները նույնպես չեն վայելում հասարակության անդամների մեծամասնության վստահությունը. հանցավոր ոտնձգության զոհ դարձած անձանց միայն 43.8%-ն է նշել, որ դիմել է իրավապահ մարմիններին: Տուժածների մնացած զանգվածի իրավապահ մարմիններին չդիմելու պատճառը երևում է գրաֆիկ 19-ից:

Գրաֆիկ 19-ից պարզորոշ երևում է, որ հանցավոր ոտնձգության զոհ դարձած անձանց կողմից իրավապահ մարմիններին չդիմելու պատճառների շարքում գերակշռողը իրավապահ մարմինների գործունեության կազմակերպման, կադրերի ընտրության հարցում առկա թերացումներն են: Թերևս դրա վկայությունն է նաև այն, որ ոստիկանություն դիմած տուժողների 64.5%-ը նշել է, որ իրեն հարմարավետ չի զգացել իրավապահ մարմիններին դիմելիս:


Գրաֆիկ 19

Ինչո՞ւ իրավապահ մարմիններին չեք հայտնել Ձեր նկատմամբ կատարված հանցագործության մասին:



Գրաֆիկ 20

Եթե Ձեզ հարմարավետ չէիք զգում իրավապահ մարմիններ դիմում ներկայացնելիս, ապա ի՞նչն էր պատճառը:




Գրաֆիկ 20-ում ներկայացված պատասխաններից ակնհայտ է, որ տուժողի մեջ անհարմարության զգացողությունը շատ քիչ դեպքերում էր պայմանավորված իրավապահ մարմինների, մասնավորապես ոստիկանության զուտ տեխնիկական հնարավորություններով. դժգոհությունների տեղիք են տալիս առավելապես ոստիկանների հոգեբանական պատրաստվածության պակասը, ինչպես նաև մասնագիտական թերապատրաստվածությունն ու աշխատանքի վատ կազմակերպումը:

Իրավապահ մարմիններ դիմած անձանց միայն 21.5%-ն է գոհ նրանց կատարած աշխատանքից, մինչդեռ 43.8%-ը դժգոհ է մնացել: Հարկ է նշել, որ դժգոհությունների տեղիք տված գործոնների շարքում առավելապես նշվել է հափշտակվածը տուժողին վերադարձնելու իրավապահ մարմինների անկարողությունը: Այս գործոնը արժանի է առանձնահատուկ ուշադրության՝ նկատի ունենալով նաև այն, որ, հարցման արդյունքների համաձայն, հանցավոր ոտնձգության զոհերի 46.3%-ի կողմից իրավապահ մարմիններին դիմելու հիմնական շարժառիթը եղել է ոչ այլ ինչ, քան սեփականությունը վերադարձնելու ցանկությունը: Արտասահմանյան մի շարք երկրների փորձը հիմք է տալիս ենթադրելու, որ հանցագործությունից տուժելու ռիսկի ապահովագրման տարբերակի ներդրումը ՀՀ-ում կարող է դրական ազդեցություն ունենալ իրավապահ մարմինների հանդեպ վերաբերմունքի փոփոխման:


Գրաֆիկ 21

Եթե ոստիկանություն դիմելուց գոհ չեք, ապա ինչո՞ւ:



Գրաֆիկ 22


Եթե հայտնել եք իրավապահ մարմիններին, ապա ո՞րն էր նրանց դիմելու Ձեր շարժառիթը:



Վիկտիմիզացիայի ենթարկվելու հետևանքով իրավապահ մարմիններ դիմած անձանց 67.9%-ը նշել է, որ հանցավորը չի պատժվել: Ընդ որում, որպես չպատժվելու պատճառներ այս անձանց 31.3%-ը նշել է կոռուպցիան, 26.5%-ը՝ հանցավորի փախուստը, 26.5%-ը՝ բավարար ապացույցներ հավաքելու իրավապահ մարմինների անկարողությունը:

Գրաֆիկ 23

Եթե հանցավորը չի պատժվել, ապա ո՞րն է դրա պատճառը:




Ներկայացված տվյալները վկայում են իրավապահ մարմիններում կադրային փոփոխությունների կատարման անհրաժեշտության մասին՝ հատկապես ուշադրություն դարձնելով ազնիվ, գրագետ, հոգեբանական գիտելիքներին տիրապետող և կիրթ մասնագետների ընտրությանը:

ՀՀ-ում բնակչության վիկտիմիզացիայի պատկերն ամբողջական դարձնելու նպատակով հարցման շրջանակում ընդգրկված անձանց առաջարկվեց պատասխանել, թե իրենց կարծիքով ո՞րն է ՀՀ-ում հանցավորության հիմնական պատճառը, և ի՞նչը կարող է նպաստել հանցավորության նվազեցմանը:


Հանցավորության և դրանից տուժելու գործընթացի պատճառ հանդիսացող գործոնների համակարգում որպես ինքնուրույն, գերակա գործոններ հարցվողները մատնանշել են կոռուպցիան, իրավապահ մարմինների աշխատանքի ցածր արդյունավետությունն ու հասարակության անտարբերությունը: Այնուհանդերձ, բնակչության 50.6%-ի կարծիքով, հանցավորության հիմնական պատճառը շարունակում է մնալ հասարակության անդամների վատ սոցիալ-տնտեսական վիճակը, ինչի բարելավումն էլ, հասարակության անդամների կարծիքով, կարող է հանգեցնել հանցավորության մակարդակի նվազեցման:

Գրաֆիկ 24

Ձեր կարծիքով, ո՞րն է ՀՀ-ում հանցավորության հիմնական պատճառը:



Ձեր կարծիքով, ի՞նչը կարող է նպաստել հանցավորության նվազեցմանը:



Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ հասարակության անդամները չափազանց կարևորում են ՁԼՄ-ների միջոցով իրենց վիկտիմիզացիայի կանխարգելման գիտելիքներ տալու անհրաժեշտությունը: Չպետք է անտեսել այն, որ հանցավորության կանխարգելման կարևոր բաղկացուցիչ տարրերից է վիկտիմիզացիայի կանխման իրականացումը՝ հանցավոր ոտնձգության հնարավոր զոհերին վիկտիմիզացիայից հնարավորինս զերծ պահելուն ուղղված վարքագիծ մշակելուն, հանցավոր ոտնձգության ենթարկվելիս ճիշտ վարքագիծ դրսևորելուն ուղղված գիտելիքներ տալու միջոցով: Կատարված ուսումնասիրությամբ ստացված տվյալները վկայում են իրավապահ մարմինների, առաջին հերթին ոստիկանության կողմից նման գիտելիքներ մշակելու և ՁԼՄ-ների միջոցով կամ այլ եղանակներով բնակչությանը հասանելի դարձնելու անհրաժեշտության մասին:

Կատարված հարցման արդյունքները թույլ են տալիս եզրակացնելու, որ՝

1. Ի համեմատ եվրոպական բազմաթիվ երկրների՝ ՀՀ-ում վիկտիմիզացիայի մակարդակը հարաբերականորեն ցածր է, ինչը, սակայն, պայմանավորված է ոչ թե իրավապահ մարմինների աշխատանքի արդյունավետությամբ, այլ դեռևս պահպանված, սակայն քայքայ-

ման միտում դրսևորող հասարակական վերահսկողությամբ, ազգային ավանդույթներով, մշակութային գործոններով: ՀՀ-ում հարցվածների 13.1%-ը նշել է, որ ինքը կամ իր ընտանիքի անդամը դարձել է հանցավոր ոտնձգության զոհ, մինչդեռ եվրոպական երկրների համար այդ ցուցանիշը միջինացված կերպով 45,5% է:

2. ՀՀ-ում հանցավորությունից տուժելու վախի ձևավորման գործում իրենց զգալի ներդրումն ունեն ՁԼՄ-ները, ինչն էլ վկայում է, որ ՁԼՄ-ներով հանցագործությունների վերաբերյալ տեղեկություններ տարածելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել դրանց որակին, մատուցման ձևին՝ շեշտադրում կատարելով դրանցում վիկտիմոլոգիական գիտելիքների առկայությանը, բնակչության համար այդ գիտելիքների մատչելիության ապահովմանը:
3. Միջոցառումներ պետք է ձեռնարկվեն իրավապահ մարմինների և բնակչության միջև փոխհամագործակցության և փոխվստահության մթնոլորտ ստեղծելու ուղղությամբ, ինչին ուղղված քայլերից մեկը կարող է լինել բնակչության շրջանում վիկտիմոլոգիական գիտելիքների տարածումը, նրանց տեղեկատվության տրամադրումը ինչպես իրենց, այնպես էլ իրենց բնակարանների անվտանգության ապահովման մասին: Իրավապահ մարմինների հանդեպ վերաբերմունքը փոփոխելու առումով դրական ազդեցություն ունեցող գործուն քայլ կլինի նաև արտասահմանյան մի շարք երկրների օրինակով հանցագործությունից տուժելու ռիսկի ապահովագրման տարբերակի ներդրումը ՀՀ-ում, ինչը կնպաստի նաև հանցավորության լատենտայնության նվազմանը:

АННА МАРГАРЯН – *Страх перед преступностью и виктимизация в Республике Армения.* – При содействии Ереванского офиса ОБСЕ в 2010 году по всей Армении был проведён специальный опрос, целью которого было оценить реальный уровень виктимизации в стране, понять, имеется ли страх перед преступностью и велик ли он, а также выявить факторы, способствующие виктимизации общества.

Были опрошены 5337 человек. Опрос показал, что 81,3 % населения, находясь дома в одиночестве, не видят причин для беспокойства. 73,9 % опрошенных чувствуют себя в безопасности, гуляя по улицам днём, а 45,6 % – также и вечером. За последние три года только 13,1 % опрошенных или членов их семей подверглись преступному посягательству. Этот показатель в 3,5 раза ниже среднестатистического показателя виктимизации в европейских странах. 43,9 % пострадавших от преступлении лиц сообщили, что они стали жертвами кражи, 16,1 % – взяточничества и 21,4 % подверглись побоям или получили телесные повреждения.

При этом проведённый опрос выявил высокий уровень недоверия населения к правоохранительным органам. Только 43,8 % лиц, ставших жертвами преступ-

ления, проинформировали правоохранительные органы о совершённом преступлении. Такая ситуация нуждается в непременном вмешательстве государства. Следует устранить причины, порождающие разрыв между правоохранительными органами и обществом, и предотвратить его углубление.

ANNA MARGARYAN – *The Fear of Crime and Victimization in the Republic of Armenia*. – In 2010 a victimization survey was carried out in Armenia with the support of OSCE Yerevan office. The main objectives of the survey were: to assess the real level of victimization in Armenia; to evaluate the public's level of personal safety perception and fear of crime; to identify the factors leading to the public's victimization.

5337 people in total were surveyed. According to the survey results, 81.3% of the population feels safe while being at home alone, 73.9% feels safe when being out alone during the day-time and 45.6% sees no reasons for worrying when being out alone at night-time. Only 13.1% of the surveyed people or members of their families were victimized during the last 3 years. This figure is 3.5 times lower when compared with the average of leading European countries. 43.9% of those who reported being victimized told that they had suffered theft, 16.1% became victims of bribery and 21.4% experienced beating or assault.

However, the survey also revealed low level of confidence in law-enforcement bodies: only 43.8% of people who experienced crime informed law-enforcement bodies about the crime incident. The State needs to intervene in the current situation and to bridge the gap between the society and the law enforcement bodies.